Արձանագրություն N 3
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16 դեկտեմբերի 2021թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Ալոյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ա. Օհանյանը, Ն. Ավետյանը և Ա. Սիմոնյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները

Ջրային կոմիտեի կարիքների համար Արփա-Սևան թիվ 2 թունելի վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների գնման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «Երվադա» ՍՊԸ կողմից՝ գնահատող հանձնաժողովի 14.12.2021թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկումը սահմանված ժամկետում (15.12.2021թ. ժամը 18:00) չի ներկայացվել:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել «Երվադա» ՍՊԸ-ի ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտը,

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/2-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը՝ ընթացակարգի մասնակիցներ «Արփա-Սևան» ԲԲ և «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊ Ընկերություններին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա **20.12.2021 թվականին ժամը 11:00-ին**, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Գ. Ալոյան
անդամներ	_____	Ա. Օհանյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Ա. Սիմոնյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան